



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, գ. Սարահարթ, Հեռ. (094)077616 ,

**ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՆԱԲԱՆԴՅԱՆԻՆ**

26. դեկտեմբերի. 2016թ.

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից՝ Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու թիվ
27-Ա, 28-Ա, 29-Ն, 30-Ն որոշումները :

Առդիր՝ 4 էլ. ֆայլ

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՍԻԼ ՓԻԼՈՅԱՆ

Կար.





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ. Սարահարթ

հեռ՝ _____
Էլ. փոստ՝ sarahart.lori@mta.gov.am

**ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 27 - Ա

« 23 » դեկտեմբերի 2016 թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ պարբերությամբ, առաջնորդվելով Սարահարթ համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ կետի 4.1 ենթակետով, Սարահարթ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Հաստատել Սարահարթ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 23 -ի նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

Սարահարթ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 23-ի նիստի

1. Սարահարթ համայնքի 2016 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից միջոցներ օգտագործելու եվ Սարահարթ համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին սոցիալական օգնություն տալու մասին
2. Սարահարթ համայնքի 2017-2021 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին
3. Սարահարթ համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մանուկյան Նազար			
Սահակյան Լյովա			
Քոթանջյան Վազգեն			
Բարիկյան Հարություն			
Հալաջյան Արթուր			
Քոթանջյան Էդգար			



Համայնքի ղեկավար՝

Վ. Փիլոյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ. Սարահարթ

հեռ. _____
Էլ. փոստ `sarahart.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 28-Ա

«23» դեկտեմբերի 2015 թ

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ
ՄԻՋՈՑՆԵՐ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԵՎ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Սարահարթ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 13 - Ա որոշմամբ սահմանվախ կարգի 4-րդ կետով, հիմք ընդունելով Նազիկ Խումարյանից ստացված դիմումը և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը, Սարահարթ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Սարահարթ համայնքի 2016 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից Սարահարթ համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին տրամադրել սոցիալական օգնություն համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Սարահարթ համայնքի 2016 թվականի բյուջեի 10.04.01 /ընտանիքի անդամներ և զավակներ / դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից տրամադրել միանվազ սոցիալական օգնություն համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Սարահարթ համայնքի 2016 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից 20000 դրամ տեղափոխել սոցիալական հատուկ արտոնություններ ծրագրի այլ նպաստներ բյուջեից տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածին (գործառնական դասակարգում 10.07.01):

4. Սարահարթ համայնքի 2016 թվականի բյուջեի թիվ 2, թիվ 3 և թիվ 6 հավելվածների համապատասխան տողերում կատարել սույն որոշման 1-ին կետից բխող փոփոխություններ:
5. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման կատարումը որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մանուկյան Նազար			
Սահակյան Լյուվա			
Քոթանջյան Էդգար			
Հալաջյան Արթուր			
Քոթանջյան Վազգեն			
Բարիկյան Հարություն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Կ.Տ



Վ. Փիլոյան

Հավելված 1

Սարահարթ համայնքի ավագանու

23.12.2016 թ թիվ 28-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

Սարահարթ համայնքի 2016 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից սոցիալական օգնություն ստացող սոցիալապես անապահով բնակիչների

1. Օսոյան Կարինե Մամիկոնի	30000 դրամ
2. Վերմիշյան Անահիտ Հրաչիկի	20000 դրամ
3. Սիմոնյան Կարինե Զավենի	30000 դրամ
4. Համբարյան Իրինա Հայկազի	25000 դրամ
5. Մարկոսյան Կարինե Սեյրանի	50000 դրամ
6. Գևորգյան Ռուբեն Աղվանի	25000 դրամ

Սարահարթ համայնքի ղեկավար



Վ.Փիլոյան

Հավելված 2

Սարահարթ համայնքի ավագանու

23.12.2016 թ թիվ 28-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

Սարահարթ համայնքի 2016 թվականի բյուջեի 10.04.01 /ընտանիքի անդամներ և զավակներ/ ծրագրից սոցիալական օգնություն ստացած անձանց

1. Սահակյան Լյուդվիգ Տաճատի	20000 դրամ
-----------------------------	------------

Սարահարթ համայնքի ղեկավար



Վ.Փիլոյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ. Սարահարթ

հեռ. _____
Էլ.փոստ `sarahart.lori@mta.gov.am

ՍԱՐԱՀԱՐԹ. ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 29 -Ն

« 23 » դեկտեմբերի 2016 թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով, Սարահարթ համայնքի ավագանին
ՈՐՈՇՈՒՄ Է.

- Հաստատել Սարահարթ համայնքի 2017-2021 թվականների սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Համայնքի ավագանու անդամներ	Կորուս	Դեմ	Ձեռնպահ
Մանուկյան Նազար			
Սահակյան Լյուվա			
Քոթանջյան Վազգեն			
Բարիկյան Հարություն			
Հալաջյան Արթուր			
Քոթանջյան Էդգար			

Համայնքի ղեկավար



Վ. Փիլոյան

գ. Սարահարթ



հավելված
Հաստատվել է՝

Սարահարթ համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 29-Ն որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՐՈՒ ՄԱՐԶ**

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

**ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Կազմել է համայնքի ղեկավար՝ Վ. Փիլոյանը

Սարահարթ -2016թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	4
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....	5
3. Սարահարթ համայնքի 2021 թվականի տեսլականը	6
4. Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն	6
4.1. Իրավիճակն ըստ ոլորտների.....	6
4.1.1. Ժողովրդագրություն և միգրացիա	6
4.1.2. Զբաղվածություն	6
4.1.3 Հնոգտազործում և գյուղատնտեսություն.....	6
4.1.4. Համայնքում իրականացվ(ող)ած ծրագրեր.....	10
4.2. Ներքին և արտաքին գործոնների վերլուծություն.....	11
5. Հիմնախնդիրների բացահայտում և լուծման ուղիները.....	10
6. 2017-2021 թվականների ընթացքում Սարահարթ համայնքում իրականացվելիք ծրագրերի ցանկը.....	13
7. Ռազմավարության սահմանում.....	15

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական ուղղությունները: Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել տեղական ինքնակառավարման մարմիններին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված իրավասությունները, համայնքի առկա ռեսուրսները, պարտավորությունները, աշխարհագրական դիրքը, ռելևային ու բնակլիմայական առանձնահատկությունները, ինչպես նաև հանրապետության տնտեսական ու սոցիալ քաղաքական առկա վիճակը, առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է համայնքի սոցիալ տնտեսական վիճակի վերլուծություն, գնահատվել են համայնքի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու զարգացմանը խոչնդոտող պայմանները և դրանք ծնող պատճառները:

Ծրագրի նախագծի հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու անդամների նախընտրական ծրագրերը, համայնքում կազմակերպված հանրային լուսմների արդյունքում սարահարթցիների տեսակետների, կարծիքների և պատկերացումների համադրումը, ինչպես նաև պետական, մարզային ու տարածաշրջանային ռազմավարական նշանակության հնարավոր այլ ծրագրերի հետ համագործակցության հնարավորությունը և այդ ծրագրերի հնարավոր ներգործությունը համայնքի բնակիչների սոցիալական հիմնախնդիրների վրա:

Ինչպիսին է ուզում տեսնել սարահարթցին իր գյուղը հաշվետու ժամանակաշրջանի ավարտին: Ինչ սոցիալ տնտեսական, բարոյահոգեբանական վիճակ կունենանք համայնքում 2021 թվականին: Ինչպիսի՞ն կլինի միջին վիճակագրական սարահարթցու կենսամակարդակը: Այս հարցերի պատասխանը կախված է նպատակների ու խնդիրների ճիշտ սահմանումից և այդ նպատակներին հասնելու ու խնդիրները լուծելու ճիշտ տակտիկա ու ռազմավարություն ընտրելու մեթոդաբանությունից: Հասկանալի է, որ մեր միջոցները սուղ են ու սահմանափակ: Հետևաբար լավագույն արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մեթոդաբանության համար հիմք ընդունել քիչ միջոցներով մեծ արդյունք ստանալու սկզբունքը: Միջոցների խնայողություն, ծախսերի արդյունավետ ու նպատակային իրականացում, առաջնահերթությունների ճշգրտում, բյուջետային եկամուտների հետևողական ավելացում. սրանք այն կարևորագույն պայմաններն են, որոնց պարտադիր կատարման արդյունքում առաջիկա 5 տարիներին քայլ առ քայլ հասնելու ենք սարահարթ համայնքի կայուն զարգացման ինչի արդյունքում 2021 թվականին կունենանք հնարավորին չափ բարեկեցիկ համայնք, սոցիալապես ավելի ապահով և համեմատաբար բարձր կենսամակարդակ ունեցող բնակիչներով, մշակութային հագեցվածությամբ:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Գյուղը հիմնադրվել է 1829-30 ական թվականներին: Գաղթելով պատմական Հայաստանի Բասենի Նահանգի Էյքիբադ գյուղից, մեր պապերը հանգրվանել են այժմյան բնակատեղիից 2-3 կմ հյուսիս-արևմուտք գտնվող մի բնակավայրում (այժմ՝ Գոգարան համայնք): Մի քանի տարի անց հիմնել են նոր այժմյան բնակավայրը: Առաջին տները կառուցվել են Մեծ աղբյուր կոչվող տարածքում: Այս տարածքում էր գտնվում նաև Հին Եկեղեցին (Հին Ժամր), որը ամբողջովին ավերվեց 1988 թ Սպիտակի երկրաշարժի հետևանքով: Այստեղ է գտնվում նաև Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշարձանը: Գյուղում կառուցված է համայնքային կենտրոն, որտեղ էլ գործում են տեղական ինքնակառավարման մարմինները: Գյուղում գործում է 1884 թվականին կառուցված Սուրբ Մարիամ Աստվածածին Եկեղեցին: Եկեղեցին վերականգնվել է 2003-04 թվականներին Մայր Աթոռի կողմից՝ սարահարթի բարերար, ամերիկացի Աշոտ Մարտիրոսյանի (Տելեմագ) կտակած միջոցներով: Եկեղեցուց 50-60 մետր դեպի հյուսիս գտնվում է հին գերեզմանոցը, որը ունի ցանկապատման ու պահպանման կարիք:

Գյուղում գործում է միջնակարգ դպրոց՝ 180 աշակերտով և 20 ուսուցչով: Հիմնականում համալրված է մանկավարժական կադրերով: Դպրոցում գործում է նաև նախադպրոցական խումբ: Դպրոցի շենքը կառուցվել է երկրաշարժից հետո և շահագործման է հանձնվել 1993 թվականին: Դպրոցի շենքի վիճակը բավարար է: Սակայն մեծ չափերի և անհարմար դիրքի պատճառով ձմռանը դժվար է տաքացվում: Զուգարանը և սանհանգույցը գտնվում են ոչ բարվոք վիճակում և կարիք ունեն հիմնանորոգման: Չի ջեռուցվում մարզադահլիճը: Ունի ընդարձակ բակ և հարմարավետ խաղահրապարակ:

Գյուղում չի գործում մշակույթի տուն, չկան մշակութային կազմակերպություններ:

Համայնքի տարածքը կազմում է 2891,04 հա, որից

1. Գյուղատնտեսական նշանակության հողեր 2719.42 հա

2. Բնակավայրի հողեր 105.62 հա

3. Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր 11.20 հա

4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքի օբյեկտների հողեր 8.02 հա

5. Հատուկ պահպանվող տարածքների հողեր 1.81 հա

6. Անտառային ֆոնդի հողեր 36.12 հա

7. Ջրային ֆոնդի հողեր 8.85 հա Համայնքային սեփականություն է 1452,46 հա հողերը ըստ նշանակության

1. Գյուղատնտեսական նշանակության 1415.45 հա

2. Բնակավայրերի 34.31 հա

3. Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր 0.89 հա

Համայնքի վարչական սահմաններում է գտնվում պետական սեփականության 938.48 հա հող, որից

1. Գյուղատնտեսական նշանակության հողեր 875.55 հա

2. Բնակավայրի հողեր 0.95 հա

3. Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր. 8.99 հա
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքի օբյեկտների հողեր 8.02
5. Հատուկ պահպանվող տարածքների 1.81
6. Անտառային 36.12
7. Ջրային 8.85

Սարի հանդամասերը հիմնականում չեն մշակվում: Ընդհանուր առմամբ չի մշակվում ավելի քան 140 հա սեփականաշնորհված հող: Որոշ վարելահողեր վերածվել են խոտհարքերի: Չի մշակվում բնակավայրին մերձակա, որպես տնամերձ քաղաքացիների սեփականություն հանդիսացող «Քարի գլուխ» կոչվող հանդամասը՝ 31 հա, 380

գյուղացիական տնտեսության սեփականություն: Համարվում է համայնքի լավագույն հողարարածքը:

Համայնքը չունի գլխավոր հատակագիծ:

Մշտական բնակչությունը թվաքանակը կազմում է 1416 մարդ:

Առկա բնակչության թիվը ձմռան ամիսներին պահպանվում է 1320 ի սահմաններում, գարնան և ամռան շրջանում զգալիորեն նվազում է ի հաշիվ արտագնա աշխատանքի մեկնողների:

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Աղյուսակ 1 ում ներկայացված է Սարահարթ համայնքի բյուջեի պլանային ցուցանիշներն 2013-2016 թվականների համար

Աղյուսակ 1

/հազար դրամ/

	Ընդհանուր բյուջեն	Վարչական բյուջեն	Ֆոնդային բյուջեն	Դոտացիա	Սեփական եկամուտները	Սեփ. Եկամ. կշիռը
2013թ	24584,3	23514,3	1070,0	18887,1	4627,0	19,7%
2014թ	26445,4	23758,6	2686,8	19166,2	4592,4	19.3
2015թ	31365,8	29703,1	1662,7	24619,3	5083,8	17.15
2016թ	39957.9	31535,5	8422,4	25649,5	5886,0	18.7

Համայնքում գործող արդյունաբերական ձեռնարկությունները չկան :

Համայնքի հողագործությունից ստացվող հիմնական գյուղատնտեսական արտադրանքը հանդիսանում են ցորենն ու գարին: Տնամերձերում աճեցվում է կարտոֆիլ, գազար, լոբի, սխտոր և այլն: Ստացված բերքի ծավալները մեծ չեն: Հաճախ չեն բավարարում գյուղացիական տնտեսությունների, ինչպես նաև համայնքի ներքին պահանջարկը:

Բավարար են համարվում կաթի արտադրության ցուցանիշները: Կաթը տեղում չի վերամշակվում: Տարբեր ընկերություններ մթերում են տեղում՝ էժան գներով:

Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ համայնքում չկան:

Գյուղում գործում է միջնակարգ դպրոց՝ կոմպլեկտավորված 12 դասարանով, նախատեսված 300 աշակերտի համար, ունի 180 աշակերտ, գործում է նախադպրոցական խումբը;

Գյուղում գործում է բուժկետ:

3. Սարահարթ համայնքի 2021 թվականի տեսլականը

Սարահարթ համայնքում առաջիկա հինգ տարիների ընթացքում ակնկալվում է բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, օգտագործելով սեփական ռեսուրսները, հնարավոր պետական օժանդակություն, դոնոր կազմակերպությունների, անհատ քաղաքացիների և արտերկրում բնակվող սարահարթցիների հնարավոր ներդրումները:

4. Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն

4.1. Իրավիճակն ըստ ոլորտների

4.1.1. Ժողովրդագրություն և միգրացիա

Համայնքում գրանցված է 400 տնտեսություն, որից առկա է 388-ը:

Ստորև բերված են ժողովրդագրական տեղեկություններ 2016թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ

Սարահարթ համայնքում առկա է սոցիալապես խոցելի բնակչություն: Ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված է 134 ընտանիք, 23 ընտանիք բազմազավակ է (երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող), կենսաթոշակառուների թիվը կազմում է 177 մարդ (որից 96 կին): Համայնքը չունի առանց ծնողական խնամքի մնացած երեխա: Միակողմանի ծնողագուրկ է 2 երեխա: Միայնակ չաշխատող կենսաթոշակառուները 2-ն են:

Մինչև 6 տարեկան երեխա ունի 72 է: Համայնքում արձանագրվել է 15 կենդանի ծնունդ, 20 մահ, գրանցվել է ընդամենը 6 ամուսնություն, ամուսնալուծություն չի գրանցվել:

2015-16թթ-ին համայնքից մշտական բնակության նպատակով արտերկիր կամ ՀՀ այլ բնակավայրեր մեկնել է 3 ընտանիք, նույն ժամանակահատվածում համայնքում մշտական բնակություն է հաստատել 4 մարդ, արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը 2015-16 թվերին կազմել է միջինը 300 մարդ:

4.1.2. Զբաղվածություն

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսությամբ, որը սակայն շահութաբեր չէ: Ոչ գյուղատնտեսական ոլորտում ընդգրկված է 71 մարդ: Մասնավորապես, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատում է 50 մարդ:

Սարահարթ համայնքում գործում են 5 առևտրի կետեր որտեղ, զբաղված անձանց թիվը կազմում է 5 մարդ:

Համայնքում չեն գործում սոցիալական ծառայություններ, նոտարական գրասենյակ, ԶԱԳՍ-ի բյուրո, աղետների ռիսկերի նվազեցման համակարգող մարմին և այլ կառույցներ: Թվարկված ծառայությունները հասանելի են Սարահարթ համայնքից 7 կմ հեռավորության վրա գտնվող Սպիտակ քաղաքում:

4.1.3 Հողօգտագործում և գյուղատնտեսություն

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ, մշակվող հողատարածքներից ցածր բերք է ստացվում, որի պատճառը

հիմնականում հողերի ոչ բերրիությունն է, ոռոգման ջրի բացակայությունը, հաճախակի կրկնվող կարկտահարությունը և երաշտը:

Տնամերձերում բնակիչները աճեցնում են բանջարեբուստանային կուլտուրաներ՝ կարտոֆիլ, լոբի, գազար, սխտոր և այլն:

Պտղաբուծությունը համայնքում զարգացած չէ:

Սարահարթ համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերը ըստ գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների

NN	Սպասարկվող տնտեսություն	Ֆողատեսք, գործառնական նշանակություն	Ընդամենը (2+3+4+8+12)	Սեփականության սուբյեկտ											
				ՔՔ քաղաքացիների	ՔՔ իրավաբանական անձանց	համայնքային					պետական				
						ընդամենը (5+6+7)	տղված անհատույց օտարտոժնան	տղված վարձակալության	օգտագործման և վարձակալության չտղված	ընդամենը (9+10+11)	տղված անհատույց	տղված վարձակալության	օգտագործման և վարձակալության չտղված	կազմակերպություններ և ՔՔ-ում կացության հատուկ	
Ա	Բ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		
1.10	1. Գյուղատնտեսական	վարելահող	513.49	427.44		86.05		11.28	74.77						
1.20		բազմ տնկ, ընդամ													
1.2.1		այդ թվում պտղ այգի													
1.2.2		խաղողի այգի													
1.2.3		այլ բազմամյա													
1.30		խոտհարք													
1.40		արոտ	1976.40	0.98		1237.60			1237.60	737.82			737.82		
1.50		այլ հողատեսքեր	229.53			91.80			91.80	137.73			137.73		
1.00		Ընդամենը	2719.42	428.42		1415.45		11.28	1404.17	875.55			875.55		

Գյուղատնտեսական մեքենայացում: Համայնքում առկա է 12 անվավոր և թրթուրավոր տրակտոր, 2 հացահատիքահավաք կոմբայն,

Գյուղատնտեսական մեքենաների քանակը

Հ/հ	Գյուղ. մեքենաներ և գործիքներ	Քանակը		
		համայնքային սեփականության	մասնավոր սեփականության	ընդամենը
1.	Հացահատիկային կոմբայն	1	1	2
2.	Տրակտոր անիվավոր		8	1
3.	Տրակտոր թրթուրավոր	1	3	
4.	Բեռնատար մեքենա		22	

Անասնապահություն: Սարահարթ համայնքում առկա է 467 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից՝ 308 գլուխ կով, խոզեր՝ 58 գլուխ, մեղվափեթակ՝ 335 հատ, թռչուն՝ 1143 հատ: Համայնքում արտադրվում է գյուղատնտեսական մթերքներ՝ կաթ, միս, բուրդ, ձու, մեղր:

Անհրաժեշտ է ստեղծել կաթի, մսի մթերման կետեր, ինչը հնարավորություն կտա զարգացնել անասնապահությունը, ստեղծել լրացուցիչ աշխատատեղեր, ավելացնել համայնքային բյուջեի մուտքերը:

Համայնքի սեփականությունը և բյուջեն

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է հողի հարկից, գույքահարկից, համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներից, և պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայից, նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) չեն եղել: Սարահարթ համայնքն ունի ապառքներ հողի հարկի՝ 5258 հազ.դրամ, այնպես էլ գույքի հարկի՝ 5441 հազ.դրամ, ինչպես նաև հաշվարկված տույժեր և տուգանքներ, համապատասխանաբար՝ 3490 հազ.դրամ և 2414 հազ.դրամ:

Սարահարթ համայնքի 2016թ.-ի բյուջեի եկամուտների պլանային և փաստացի կատարման ցուցանիշները 2016 թ դեկտեմբերի 20-ի դրությամբ

Տողի NN	Եկամտատեսակները	պլանավորված	Փաստացի կատարված	Կատ. %-ով
		վարչական բյուջե	Վարչական բյուջե	
1	2	3	4	5
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ այդ թվում՝	31,535,500.00	30,993,208.00	98.28
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	2,085,900.00	1,825,238.00	87.50
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	2,854,100.00	2,860,400.00	100.22
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվությամբ համար որից՝	50,000.00	40,000.00	80.00
1133	աա) Հիմնական շինությունների համար	50,000.00	40,000.00	80.00
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար	96,000.00	71,600.00	74.58
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	25,649,500.00	25,649,500.00	100.00

1331	Համայնքի սեփականություն համարվող հող վարձակալության վարձավճարներ	750,000.00	462,500.00	61.67
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագր ենթակա այլ եկամուտներ	50,000.00	83,970.00	167.94

Մարահարթ համայնքի 2017թ.ի բյուջեի եկամուտների պլանային ցուցանիշները
ըստ եկամտատեսակների

Տողի	Եկամտատեսակները	վարչական մաս (հազ.դրամ)
1	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	32327.2
2	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	0.0
3	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	2085.9
4	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	2854.1
5	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար (տող 1133 + տող 1334),	50.0
6	աա) Հիմնական շինությունների համար	50.0
7	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգել խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվությ համար	96.0
8	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	26441.2
9	բբ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվ այլ դոտացիաներ	
1	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	750.0
11	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատար հատկացումներից մուտքեր	X
12	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջ մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	50.0

Մարահարթ համայնքի 2016թ.-ի բյուջետային ծախսերի պլանային և փաստացի կատարման
ցուցանիշները ըստ գործառական դասակարգման 2016թ դեկտեմբերի 20-ի դրությամբ.

0		պլանավորված		փաստացի կատարված		կատարված է %	
		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	31,535,500	8,422,419	21,551,881	7,147,400	68.3	84.9
2	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	22,948,000	0	17,337,009	0	75.5	
3	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	200,000	0	200,000	0	100.0	
4	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1,400,000	7,692,419	1,149,872	6,619,400	82.1	86.1
5	ՇՐՋԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	1,300,000	0	880,000	0	67.7	
6	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	1,350,000	730,000	420,000	528,000	31.1	72.3
7	ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	380,000	0	120,000	0	31.6	
8	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	800,000	0	300,000	0	37.5	
9	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	1,400,000	0	1,145,000	0	81.8	

4.1.4. Համայնքում իրականացվ(ող)ած ծրագրեր

Վերջին տարիներին համայնքում իրականացվ(ող)ած ծրագրեր

	Ծրագրեր	Իրականացնող կազմակերպությունը	Ծրագրի արժեքը, հազ. դրամ	Համայնքի ներդրում	Իրականացման տարեթիվը
1	Ոռոգման ջրի ջրամբարի հիմնանորոգում	Համայնք	6619000	6619000	2016թ

4.2. Ներքին և արտաքին գործոնների վերլուծություն

Ուժեղ (SWOT) վերլուծություն (ուժեղ և թույլ կողմեր)

Ներքին	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> Խմելու ջրի լեռնային աղբյուրների առկայություն <input type="checkbox"/> Հիմնականում գազաֆիկացված է 	<ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> Բնակավայրով չեն անցնում խոշոր նշանակության ավտոճանապարհներ <input type="checkbox"/> Ոռոգման ջրի անբավարարություն <input type="checkbox"/> Մայրաքաղաքից հեռավորությունը <input type="checkbox"/> Գյուղը մարզկենտրոնի հետ կապող հասարակական տրանսպորտի անկանոն աշխատանք <input type="checkbox"/> Հողհանդակների մեծ թեքությունը <input type="checkbox"/> Գյուղատնտեսական տեխնիկական հին է ու մաշված

Ուժեղ (SWOT) վերլուծություն (հնարավորություններ և սպառնալիքներ)

Արտաքին	
Հնարավորություններ	Սպառնալիքները
<p>Փամբակ գետի ջրային ռեսուրսներ</p> <p>Գյուղատնտեսական արտադրանքի շուկայի կազմակերպում</p> <p>Կաթի, մսի մթերման կետի ստեղծում</p> <p>Քարի հանքի շահագործում</p>	<p>Բնակլիմայական պայմանները՝ պարբերաբար կրկնվող երաշտները, կարկտահարությունները</p> <p>Բնակավայրը գտնվում է սեյսմոակտիվ գոտում</p>

5. Հիմնախնդիրների բացահայտում և լուծման ուղիները

Սարահարթ համայնքի զարգացման 2021 թվականի տեսլականին հասնելու համար զարգացման ուղղություններն ու գերակա ոլորտները ըստ առաջնահերթությունների

1. Գյուղատնտեսություն
 - 1.1 հողագործություն
 - 1.2 անասնապահություն
 - 1.3 արտադրանքի իրացում
2. Կոմունալ տնտեսություն
 - 2.1 Խմելու ջրի քանակի ավելացում, որակի բարելավում
 - 2.2 Աղբահանության բարելավում, սան մաքրում
 - 2.3 Փողոցների լուսավորություն
3. Բնակարանաշինություն
 - 3.1 Երկրաշարժից անօթևան մնացած ընտանիքների բնակարանով ապահովման հիմնախնդիր
 - 3.2 Երիտասարդ և նորաբաժան ընտանիքներին համայնքային սեփականության հողերից

- բնակարան կառուցելու նպատակով հողամասերի տրամադրում
4. Արտադրություն, առևտուր, ծառայություններ
 - 4.1 Փոքր ձեռնարկատիրության խթանում
 - 4.2 Առևտրի կազմակերպման, առևտրի օբյեկտների ավելացում
 - 4.3 Սպասարկման ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատիրության կայացմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումներ
 5. Տրանսպորտ
 6. Կրթություն,
 7. Հանգիստ, մշակույթ, սպորտ, երիտասարդություն

Աղյուսակում բերված է 2017-2021 թվականների ընթացքում Սարահարթ համայնքում իրականացվելիք ծրագրերի ցանկը

հհ	Ծրագիր	Իրականացման տարի	Ֆինանսավորման աղբյուրները	Պահանջվող ֆինանսական միջոցներ	Ծրագիրը իրականացնողը	այլ
1	Պոմպակայանի վերագործարկում	2017թ	Պետական օժանդակություն, «Գետիկ» ՋՕՄ, Համայնքի ներդրում	10000000 դրամ /5000000 սկզբնական և մինչև 2021թիվը 1000000 ամեն տարի	Համայնք «Գետիկ» ՋՕՄ	
2	«Մանուկյանի առու» ինքնահոս ջրատարի վերականգնում	2017թ	Համայնքի բյուջե	1500000դ	Համայնք	
3	Համայնքային ճանապարհների նորոգում	Շարունակական 2017-2021թթ	Համայնքի բյուջե	1000000 դ յուրաքանչյուր տարի	Համայնք	
4	Փողոցների լուսավորության ավելացում	Շարունակական 2017-2021թթ	Համայնքի բյուջե	500000 դ յուրաքանչյուր տարի	Համայնք	
5	Մարզահրապարակների կառուցում	2017-2018թթ	Համայնքի բյուջե Բնակիչների աջակցություն	300000դ	Համայնք	
6	Մարզկենտրոնը համայնքին կապող երթուղու անխափան աշխատանք	2017-2021թթ	Առանց ֆին. երդրման		Համայնքապետարան Մարզպետարան Տնտեսվարող կազմակերպություններ	
7	Համայնքապետարանի ինքնագործ մշակութային	2017թ	Համայնքի բյուջե Հասարակական	720000 դ	Համայնք	

	խմբերի ստեղծում		կազմակերպություններ			
8	Համայնքյին կենտրոնի գույքի ձեռքբերում	2017-2018 թթ	Համայնքի բյուջե	300000 յուրաքանչյուր տարի	համայնք	
9	Դպրոցի զուգարանի և սանհանգույցի նորոգում	2017թ	«Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» ծրագիր Համայնքի բյուջե Դպրոցի ներդրում	1800000դ		
10	Խմելու ջրի ներքին ցանցի ընդլայնում	2017-2021թթ	Դոնոր կազմակերպություններ համայնք	500000դ յուրաքանչյուր տարի	Համայնք	
11	Գազաֆիկացված թաղամասերի ավելացում	2017-18թթ	«Հայրուսգազարդ» Համայնքի բնակիչներ			
12	Կաթի վերամշակման կայանի ստեղծում	2017թ	Մասնավոր ներդրող		Համայնք Մասնավոր ներդրողներ	
13	Քարի հանքի շահագործում	2017-2021 թթ				
14	Կարի արտադրամասի հիմնում					

7. Ռազմավարության սահմանում

Համայնքի սոցիալ - տնտեսական զարգացման ծրագիրը ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկարգ և գրավիչ բնակավայր, զարգացնել գյուղատնտեսության ավանդական ճյուղերը /անասնապահություն, բուսաբուծություն/: Համայնքում պայմաններ ստեղծել անասնապահական արտադրանքի վերամշակման և իրացման դժվարությունները հաղթահարելու համար:

Սարահարթ համայնքի 2017-21 թթ հնգամյա զարգացման ռազմավարական ծրագրում ներառված առանձին ծրագրային դրույթները վերջնական չեն և սահմանափակված չեն սույն ծրագրում ներառվածով: Համայնքը դինամիկ զարգացող կենդանի համակարգ է և առաջիկայում ևս համապատասխան միջոցների հայթայթման, հնարավոր ներդրողների հետ փոխշահավետ համագործակցության, այլ ծրագրերում կառավարության օժանդակության դեպքում սույն ծրագրում հարող են ավելացվել նոր ծրագրային դրույթներ:

Սույն ծրագրում ներառված դրույթները ենթակա են պարտադիր կատարման:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր
Պոմպակայանի վերագործարկում
 (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքային և բակիչների սեփականություն հանդիսացող 240 հա վարելահողերի ոռոգման ապահովում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ապահովել համայնքի գյուղատնտեսական նշանակության հողամասերն ու տնամերձերը բավարար քանակի ոռոգման ջրով: Գյուղատնտեսական արտադրանքի ավելացում:						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016 անկա է խողովակաշարը և բարձրավոլտ հոսանքագիծ	2017 պոմպի, էլ: շարժիչի և տրասֆորմատորի տեղադրում 5000000	2018 Ոռոգվող հողերի ավելացում 1000000դ	2019 Ոռոգվող հողերի ավելացում 1000000	2020 Ոռոգվող հողերի ավելացում 1000000	2021 Ոռոգվող հողերի ավելացում 1000000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	Համայնքի տնամերձերի ոռոգման հնարավորություն						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	1.	6000000	1000000	1000000	1000000	1000000	1000000
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Փաստաթղթային ապահովում 1.2. Փամբակ գետի ջրից ջրառ և ինքնահոսով տեղափոխում մինևը պոմպակայան 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Տրասֆորմատորի, էլ. Շարժիչի և պոմպի տեղադրում 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 2000000 Կապիտալ ծախսեր՝ 8000000 Ընդհանուր բյուջեն՝ 10000000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքի բնակիչների աշխատուժ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Էլեկտրաէներգիայի բարձր սակագին						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի հողօգտագործողներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	փետրվար-հունիս 2017թթ այնուհետև շարունակական մինչև 2021թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Խողովակաշարը և բարձրավոլտ հաղորդագծերը անկա են: Տեղադրվում է տրասֆորմատորը, էլեկտրական շարժիչը և պոմպը: Ծրագիրը իրականացնում է «Գետիկ» ՋՕՄ ը, կառավարությունը տրամադրում է էլեկտրաէներգիայի սուբսիդիա, սարահարթ համայնքը կատարում է համապատասխան ներդրումներ: Ծրագրի իջականացումով կլուծվի Սարահարթի վարելահողերի ոռոգման խնդիրը, գյուղի ազգաբնակչությունը կներգրավվի գյուղատնտեսական աշխատանքներում, կկրճատվի գործազրկությունը, կավելանա գյուղմթերքների արտադրության ծավալները: Նպաստավոր պայմաններ կստեղծի արտագնա աշխատանքի մեկնողների թիվը կրճատելու:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Մանուկյանի առու» ինքնքիս ջրատարի վերականգնում
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ոռոգման ջրի անբավարարություն						
Ծրագրի անմիջական նպատակ	Ինքնահոս ոռոգման ջրով ապահովել մոտ 50 գյուղացիական տնտեսության մոտ 10 հա տնամերձ:						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	1500000դ.	Ընթացիկ նորոգում և պահպանում ն/դ չի նախատ	Ընթացիկ նորոգում և պահպանում ն/դ չի նախատ	Ընթացիկ նորոգում և պահպանում ն/դ չի նախատ	Ընթացիկ նորոգում և պահպանում ն/դ չի նախատ	Ընթացիկ նորոգում և պահպանում ն/դ չի նախատ	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	«Փոքր ծորից» ջրառ և տնամերձերի ապահովում ոռոգման ջրով						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Քայքայված առու	Գործող առու	Գյուղմթերքների արտ. աճ	Գյուղմթերքների արտ. աճ	Գյուղմթերքների արտ. աճ	Գյուղմթերքների արտ. աճ
		Ելակետային արժեք	2016	2017	2018	2019	2020
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Համապատասխան քանակի և տրամաչափի խողովակների ձեռքբերում</p> <p>1.2.</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Առվի մաքրման հողային աշխատանքների իրականացում</p> <p>2.2.</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 1000000դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 500000 դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 1500000դրամ</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աազտ աշխատուժ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Հնարավոր փլուզումներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Սարահարթ համայնքի գյուղացիական տնտեսություններ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017 թվականի ապրիլ – հունիս ամիսներ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Առուն հնարավոր է վերականգնել համայնքի բյուջեի միջոցներով: Փլուզված տեղերի համար կպահանջվի 50-60 մետր խողովակ, մնացածը հողային մաքրման աշխատանքներ են: Մեկ անգամ ներդրումների միջոցով առուն վերականգնելուց հետո հնարավոր կլինի ամեն տարի առանց ֆինանսական միջոցների շահառուների միջոցով մաքրել ու պահպանել առուն:</p>						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

Համայնքային ճանապարհների նորոգում և պահպանում
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների ոչ բարվոք վիճակ					
Ծրագրի անմիջական նպատակ	Ապահովել ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների նորմալ վիճակ					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
		1000000	1000000	1000000	1000000	1000000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Յուրաքանչյուր տարի կատարել ճանապարհների ընթացիկ նորոգում և պահպանում</p> <p>1.2.</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1.</p> <p>2.2.</p>					
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 3000000</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 2000000</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 5000000</p>					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ազատ աշխատուժ, բեռնատար և ինքնաթափ մեքենաներ, շինարարական տեխնիկա,					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Դիզեյային վառելիքի գներ					
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի ազգաբնակչություն					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ -2021թ					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Յուրաքանչյուր տարի՝ ներդրվում է 1000000 դրամ գումար համայնքի բյուջեի միջոցներից, ինչով ապահովվում է ներհամայնքյին ու հանդամիջյան ճանապարհների որակը: Առանձին դեպքերում նախատեսված միջոցների շրջանակներում կիրականացվի նաև նշված ճանապարհների ընթացիկ նորոգում և պահպանում:					

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր
Արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում
 (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքային փողոցներում ու գյուղի ծայրամասերում գիշերային լուսավորության բացակայություն, հատկապես ձմեռային ամիսներին գայլերի հարձակումներ						
Ծրագրի անմիջական նպատակ	Գյուղի բարեկարգում, արտաքին լուսավորության ավելացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Արտաքին լուսավորություն միայն կենտրոնական փողոցում	500000	500000	500000	500000	500000	500000	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	Հետևողականորեն ավելացնել լուսավորվող փողոցները						
	Ցուցանիշներ	Ելակետային Արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Ավելացնել լուսավորված փողոցների թիվը	Ավելացնել լուսավորված փողոցների թիվը	Ավելացնել լուսավորված փողոցների թիվը	Ավելացնել լուսավորված փողոցների թիվը	Ավելացնել լուսավորված փողոցների թիվը	Ավելացնել լուսավորված փողոցների թիվը
	Հասնել բնակավայրի ամբողջական լուսավորվածության						
Ցուցանիշներ	Ելակետային Արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
						Գյուղը ամբողջությամբ ծածկել արտաքին լուսավորությամբ	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Էլեկտրասյուների, ջահերի և հաղորդալարերի ձեռքբերում /շարունակական/ 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Էլեկտրասյուների տեղադրման և մոնտաժման աշխատանքներ /շարունակական/ 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1000000դ. Կապիտալ ծախսեր՝ 1500000 Ընդհանուր բյուջեն՝ 2500000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքի բնակիչների աշխատուժ Էլեկտրասյուներ հաղորդալարեր ջահեր						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Էլեկտրաէներգիայի բարձր սակագին						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի ազգաբնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ 2021թ շարունակական						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեի միջոցներով ավելացնել բնակավայրի ամբողջ տարածքի արտաքին լուսավորության ապահովմանը:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

Մարզահրապարակների կառուցում

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Դպրոցականների և երիտասարդության ազատ ժամանակի օգտագործում,						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնի բակերում, առանձին չօգտագործվող տարածքներում տեղադրել պտտածողեր, ճոճանակներ, ոչ բարդ ու ոչ թանկարժեք մարզական սարքավորումներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Նմանատիպ սարքերի բացակայություն	100000	100000	100000	100000	100000	100000	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	Թիրախային արժեքներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Նմանատիպ սարքերի բացակայություն						
	1.						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	1.1. Նախատեսված միջոցների շրջանակներում յուրաքանչյուր տարի տեղադրել պտտածողեր, ճոճանակներ, ոչ բարդ ու ոչ թանկարժեք մարզական սարքավորումներ /շարունակական 1.2.						
	2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	2.1. Նախատեսված միջոցների շրջանակներում յուրաքանչյուր տարի տեղադրել պտտածողեր, ճոճանակներ, ոչ բարդ ու ոչ թանկարժեք մարզական սարքավորումներ /շարունակական 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 200000 դ. Կապիտալ ծախսեր՝ 300000 դ. Ընդհանուր բյուջեն՝ 500000 դ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի երեխաներ և երիտասարդներ, ազգաբնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ-2021թ						
